660 Մենք Տեր Հիսուսի զինվորներն ենք քաջ,

1. Մենք Տեր Հիսուսի զինվորներն ենք քաջ,
Խաչի վրա թափած Արյունով գնված,
Կարողությունով Նրա զորության,
Միշտ քայլենք, միշտ քայլենք առաջ:
Փոթորիկները երբ մեզ վրա գան,
Դժվարություններ, նեղություններ գան,
Աստծո սպառազինությունը հագած՝
Միշտ քայլենք առաջ, համարձակ ու քաջ:

2. Ճշմարտության խոսքով գոտևորվենք
Եվ արդարության զրահը հագնենք,
Եվ հավատքի վահանը մենք առնենք,
Փրկության սաղավարտը դնենք:
Երբ որ թշնամին գետի նման գա,
Մենք չենք շփոթվի ու չենք վախենա,
Թշնամու առաջ Հոգին մեր Տիրոջ
Պիտի կանգնեցնի հաղթության դրոշ:

3. Մենք Տեր Հիսուսի զինվորներն ենք քաջ,
Խաչի վրա թափած Արյունով գնված,
Կարողությունով Նրա զորության,
Միշտ քայլենք, միշտ քայլենք առաջ: (2)